ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-ԻՆ ԿՆՔՎԱԾ ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԵՐԵԽԱՅԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏԻ ՍՆՆԴԻ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-Եր-1-ԱՋԿ» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **« » « » 2026թ.**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Մանգասարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Պրոդ Ինվեստ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Կարեն Մկրտչյանի, ով գործում է և ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, հիմք ընդունելով 2026 թվականի փետրվարի 25-ին կնքված N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-Եր-1-ԱՋԿ» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5-րդ և 8.16-րդ կետերը, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի N 3-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը և Համաձայնագրի Հավելվածը կազմված են 2 էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 3 ՀՎՀՀ՝ 01506515	«Պրոդ Ինվեստ» ՍՊԸ Երևան, Զ. Անդրանիկի 44 շ բն 3 Արմսվիսբանկ ՓԲԸ Հ/Հ 2500011359880100 ՀՎՀՀ 01347339
----------	----------
(ստորագրություն) Կ.Տ.	/ստորագրություն/ Կ.Տ

Ստորագրող

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

1707790329

Digitally signed by
MANGASARYAN ARTAK
2707770051
Date: 2026.03.31 16:31:24 AMT

2026-03-25 16:09:25 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հավելված 1
2026թ. « » կնքված
N 1 համաձայնագրի
Հավելված N 3
25 փետրվարի 2026թ. կնքված
ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-Եր-1-ԱՋԿ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀդրամ

Ապրանք															
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստԳՄԱ դասակարգան (CPV)	անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	15898200/501	սննդի փաթեթներ		2200200	3474000	4747800	5790000	7063800	8395500	9611400	10827300	12101100	13317000	14590800	14,590,800
Ընդամենը															14,590,800

ԳՆՈՐԴ
ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարություն
Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
ՀՎՀՀ՝ 01506515

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Պրոդ Ինվեստ» ՍՊԸ
Երևան, Զ. Անդրանիկի 44 2 բն 3
Արմսվիսբանկ ՓԲԸ
Հ/Հ 2500011359880100
ՀՎՀՀ 01347339

/ստորագրություն/
Կ.Տ.